ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունիսի 2011թ. **N___-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 605-րդ հոդվածներով ու հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Երևանի քաղաքային համայնքին գույք նվիրաբերելու մասին» N496-Ա և 2011 թվականի մայիսի 5-ի «Երևանի քաղաքային համայնքին գույք նվիրելու մասին» N573-Ա որոշումները՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 18 343 600 դրամ հաշվեկշռային արժեքով 484 մանկական սայլակները՝ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու համար:

2. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Շիմիձու» կորպորացիայի կողմից Նուբարաշենի թափոնակուտակչի տարածքում կառուցված 1025866.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով բիոգազի հավաքման և այրման կառույցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N496-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ 18 343 600 դրամ հաշվեկշռային արժեքով 484 մանկական սայլակները նվիրաբերվել է Երևանի քաղաքային համայնքին՝ կարիքավոր ընտանիքներին անհատույց բաշխելու համար, իսկ 2011թվականի մայիսի 5-ի «Երևանի քաղաքային համայնքին գույք նվիրելու մասին» N573-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող «Շիմիձու» կորպորացիայի կողմից Նուբարաշենի թափոնակուտակչի տարածքում կառուցված 1025866.8 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով բիոգազի հավաքման և այրման կառույցը նվիրվել է Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված:

Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերներն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ